ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №144/20

Ք. Երևան «28» հուլիսի 2020 թ.

"ՀՈՒՅՍ-ՄՈՏՈՐ" ՍՊԸ, այսուհետ՝ "Մատակարար, ի դեմս Տնօրեն Հովսեփ Հովակիմյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և "Լոռի Բերդի համայնքապետարանը", ի դեմս համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանի, այսուհետ՝ "Գնորդ", մյուս կողմից, կնքեցին պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում Գնորդին հանձնել ապրանքներ, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքները և վճարել դրանց դիմաց:
1.2. Ապրանքների անվանացանկը, քանակը և գինը սահմանվում է համաձայն հարկային հաշվի և դրան համարժեք հաշվարկային փաստաթղթերի:
1.3. Մատակարարը ապրանքները հանձնում է Գնորդին Կողմերի միջև համաձայնեցված և համապատասխան ապրանքների մատակարարման հարկային հաշվում նշված ապրանքների մատակարարման օրը՝ հանձնման-ընդունման ակտով:
1.4. Ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը Գնորդին է փոխանցվում ապրանք(ներ)ի դիմաց ամբողջությամբ վճարելուց հետո:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Մատակարարը իրավունք ունի՝
2.1.1. Գնորդի կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքները չընդունելու դեպքում Գնորդից պահանջել գրավոր ներկայացնել պատճառաբանված դիտողություններ հանձնված Ապրանքների որակի, քանակի մասնագրերից շեղումների վերաբերյալ կամ ընդունել Ապրանքները և վճարել ապրանքների ամբողջ արժեքը համաձայն հարկային հաշվի:
2.1.2. Գնորդի կողմից համապատասխան Հավելվածով սահմանված վճարման ժամկետը խախտելու դեպքում պահանջել վճարել Հավելվածում նշված վճարման ենթակա ընդհանուր գումարը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված տույժը:
2.2. Մատակարարը պարտավոր է՝
2.2.1. Գնորդին հանձնել սույն պայմանագրի հիման վրա դուրս գրված հարկային հաշվով նախատեսված ապրանք(ներ).
2.2.2. առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրի գործողության ժամկետի սահմաններում, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը:
2.3. Գնորդը իրավունք ունի՝
2.3.1. եթե Մատակարարը Գնորդին հանձնել է սույն պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, պահանջել լրացնելու տվյալ ապրանքի պակաս հանձնված քանակը:
2.3.2. եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք, հանձնման-ընդունման պահին պահանջել փոխել անորակ ապրանքը երկկողմանի համաձայնեցված ժամկետում:
2.4.Գնորդը պարտավոր է՝
2.4.1. կատարել սույն պայմանագրին համապատասխան հանձնված ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում.
2.4.2. հանձման-ընդունման պահին զննել ապրանքները, ստուգել դրանց քանակը և որակն ու հայտնաբերված թերությունների մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Մատակարարին.

3. Ապրանքի գինը և հաշվարկման կարգը

3.1. Սույն պայմանագրի հիման վրա տրամադրված հարկային հաշվի գինը ներառում է ավելացված արժեքի հարկը, ապրանքը Գնորդին հասցնելու համար կատարված տրանսպորտային ծախսերը, ինչպես նաև սույն պայմանագրի պայմանները կատարելու հետ կապված՝ Մատակարարի ծախսերը: Գնորդն իրեն հանձնված ապրանքի դիմաց վճարում է ապրանքը ստանալուց հետո կանխիկ կամ անկանխիկ եղանակով, համաձայն համապատասխան Հավելվածում սահմանված ժամանակացույցի:

4. Ապրանքի հանձնում-ընդունումը

4.1. Ապրանքն ընդունելու ժամանակ Գնորդն ստուգում է ապրանքի որակը և դրա համապատասխանությունը փաստաթղթերում նշված տվյալներին:
4.2 Ապրանքների ընդունումը կատարվում է հանձնման–ընդունման ակտի հիման վրա, որը Գնորդը պարտավոր է ստորագրել ապրանքը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք)ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավուք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով, ՀՀ ընդհանուր իրավասության դատարանում:

7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և չի կարող ուժը կորցրած համարվել, քանի դեռ պայմանագրի Կողմերը միմյանց նկատմամբ ունեն պարտավորություններ:
7.2. Սույն պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են գրավոր և վավերացվում Կողմերի կողմից:
7.3. Սույն պայմանագիրը լուծարելու և դադարելու հիմքերը որոշվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
7.5 Սույն Պայմանագրին կցված Հավելվածները (Վճարման ժամանակացույց) համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Մատակարար "Հույս-Մոտոր" ՍՊԸ	Գնորդ Լոռի Բերդի համայնքապետարան
ՀՎՀՀ 00430814	ՀՎՀՀ 06954163
Հասցե՝ Ք. Երևան, Զավարյան 12	Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ գ.Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7
Գործ. հասցե՝ Ք. Երևան, Արին Բերդի 17	Մատակարարման հասցե՝ ՀՀ Լոռու մարզ գ.Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7
"Ինեկոբանկ" ՓԲԸ	ՀՀ Ֆին Նախ. Գործառնական վարչություն
Հաշվարկ. Հաշիվ 2050022311031001	Հաշվարկ. Հաշիվ 900252000527
Տնօրեն՝ Հ. Հովակիմյան	Համայնքի ղեկավար՝ Ա.Ներսիսյան

28/07/2020թ-ին կնքված թիվ 144/20 պայմանագրի թիվ 1 հավելված

28/07/2020

Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 19.500 (տասնինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Գնորդը պարտավոր է հանձման -ընդունման արձանագրությունը ստորագրելու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին վճարել Հավելվածում նշված վճարման ենթակա ընդհանուր գումարը:

Մատակարար "Հույս-Մոտոր" ՍՊԸ	Գնորդ Լոռի Բերդի համայնքապետարան
ՀՎՀՀ 00430814	ՀՎՀՀ 06954163
Հասցե՝ Ք. Երևան, Զավարյան 12	Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ գ.Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7
Գործ. հասցե՝ Ք. Երևան, Արին Բերդի 17	Մատակարարման հասցե՝ ՀՀ Լոռու մարզ գ.Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7
"Ինեկոբանկ" ՓԲԸ	ՀՀ Ֆին Նախ. Գործառնական վարչություն
Հաշվարկ. հաշիվ 2050022311031001	Հաշվարկ. հաշիվ 900252000527
Տնօրեն՝ Հ. Հովակիմյան	Համայնքի ղեկավար՝ Ա.Ներսիսյան

Պատվիրատու

Լոռի Բերդի համայնքապետարան
Գտնվ. վայր գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթ 7
ՀՀ 900252000527
ՀՀ ՖՆ թիվ 1 գործառն. Վարչություն
ՀՎՀՀ 06954163

Մատակարար

"Հույս-Մոտոր" ՍՊԸ
Ք. Երևան, Զավարյան 12
ՀՀ 2050022311031001
"Ինեկոբանկ" ՓԲԸ
ՀՎՀՀ 00430814

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 28 » « հուլիսի » 2020 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Լոռի Բերդ համայնքի կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «28» «հուլիսի» 2020 թ.
Պայմանագրի համարը՝ N 144/20
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «28» « հուլիսի » 2020 թ. դուրս գրված N1868636955 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Լիտոլ տաուտ: Sintec Litol 24	400գ-ոց սրվակ, գույնը՝ բաց դեղինից մինչև շականագույն: Բարձր հալման կետ (անկման կետը 185°C է) լավ կպչունություն տարբեր մակերեսների,առանձգականության բարձր ամրություն, ջերմակայուն (աշխատում է 40-ից +120 միջակայքում, կարճ ժամանակով մինչև 130 °C քիմիապես կայուն:	15 հատ	15 հատ	հուլիս	հուլիս	19.500	օգոստոս

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն
Հ. Հովակիմյան

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն
Ա. Ներսիսյան

Կ.Տ.

«28» 07.2020 թ. կնքված

N 144/20 *պայմանագրի*

ԱԿՏ N 01

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Լոռի Բերդի համայնքապետարան-ի (այսուհետ՝ Գնորդ) "ՀՈՒՅՍ-ՄՈՏՈՐ" ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մատակարար) միջև 2020թ. Հուլիսի 28-ին կնքված N 144/20 պայմանագրի շրջանակներում Մատակարարը 2020 թ. Հուլիսի 28 -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Լիտոլ տաուտ: Sintec Litol 24	հատ	15

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Հ. Հովակիմյան

Ընդունեց

Ա.Ներսիսյան